ՀՀ կրթության տեսչական մարմին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 20 ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆԸ» ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԴԵԿՏԵՄԲԵՐ, 2022

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 20 ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆԸ» ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բովանդակություն

1.	Նախաբան	**3**
2.	Դասալսման գործիքակազմ	**5**
3.	Դասերի արդյունավետության գնահատման արդյունքներն՝ ըստ բնութագրիչների	**7**
4.	Ուսուցչի՝ ՏՀՏ իմացությունն ու կիրառումը ուսուցման ընթացքում	**26**
5.	Գրավոր աշխատանքների արդյունքներ	**28**
6.	Գնահատում	**35**
7.	Եզրակացություն	**37**

1. ՆԱԽԱԲԱՆ

12 դեկտեմբերի 2022թ.

ՀՀ կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրի շրջանակում, տեսչական մարմնի գործունեության 2022 թվականի տարեկան ծրագրում ներառված՝ «Աջակցություն ուսուցման կազմակերպմանը» (այսուհետ՝ ԱՈՒԿ) ծրագրին համապատասխան, ՀՀ 20 (ՀՀ Լոռու մարզի Վանաձորի հ.հ. 20, 23, 27 հիմնական, ՀՀ Շիրակի մարզի Գյումրու հ.հ. 9, 25, 38 հիմնական, հ. 27 միջնակարգ, ՀՀ Տավուշի մարզի Իջևանի հ.հ. 3, 4 հիմնական, Դիլիջանի հ. 5 միջնակարգ, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի հ.հ. 2, 8 միջնակարգ, Արմավիրի միջնակարգ, ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի հ. 1 ավագ, Վայոց Ձորի մարզի Եղեգնաձորի հ. 2 հիմնական, Երևանի հ.հ. 21, 46, 53, 75, 80 հիմնական դպրոցներ) հանրակրթական ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ դպրոց)՝ ուսուցիչներին տեղում մեթոդական աջակցություն ցուցաբերելու, դասերի ընթացքում առաջացած խնդիրների բարձրաձայնման և լուծման, ինչպես նաև դասավանդման և ուսումնառության որակի բարձրացման և կրթության արդյունավետ կազմակերպման նպատակով իրականացվել են՝

– ուսումնական պարապմունքների լսումներ[1] «Հայոց լեզու» և «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») առարկաներից VI, IX, XI դասարաններում, դասավանդողի և սովորողի գործողությունների դիտարկում, գրավոր առաջադրանքների միջոցով սովորողների գիտելիքների գնահատում.

– դասավանդողի մանկավարժամեթոդական կարողությունների, մասնագիտական գիտելիքների, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման զարգացմանն ուղղված մեթոդական աջակցության տրամադրում:

Դասալսումներն իրականացրել են գործընթացում օրենսդրությամբ սահմանված կարգով ներգրավված մասնագետները՝ տեսչական մարմնի կողմից մշակված գործիքակազմի (դասալսման և սովորողների ուսումնառության, ուսուցիչների դասավանդման և կրթության բովանդակային կազմակերպման որակի վերաբերյալ եզրակացությունների ձևաթղթեր) հիման վրա:

Դասալսումներն իրականացվել են դպրոցի այն ուսուցիչների մոտ, որոնց դասավանդած դասարաններում (VI, IX, XI) սովորողների մնացորդային գիտելիքների մակարդակը որոշելու նպատակով տեսչական մարմնի կողմից իրականացվող ստուգումների շրջանակում տրվել են

---

[1] *Սովորողների առարկայական գիտելիքները գնահատելու նպատակով դասալսումները իրականացվել են «Հայոց լեզու» և «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») առարկաներից 6-րդ, 9-րդ և 11-րդ դասարաններում, որտեղ տրվել են նաև գրավոր աշխատանքներ: Առարկաների ընտրությունը պայմանավորվում է նրանով, որ թե՛ հայոց լեզուն, թե՛ մաթեմատիկան Հանրակրթության պետական չափորոշչով պարտադիր ուսուցման համար սահմանված հիմնական առարկաների՝ «Հայոց լեզու և գրականություն», «Մաթեմատիկա», «Հայոց պատմություն», «Օտար լեզու», ցանկում են: Դրանք հիմնարար առարկաներ են, որոնք ունեն երաշխավորված ժամաքանակ բոլոր դպրոցներում՝ անկախ դպրոցի կազմակերպաիրավական ձևից:*

գրավոր աշխատանքներ «Հայոց լեզու» («Մայրենի») և «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») առարկաներից:

«Մաթեմատիկա» առարկայի առաջադրանքները կազմվել են Գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից, «Հայոց լեզու» առարկայից տրված թելադրության նյութերը վերցվել են նախորդ դասարանում յուրացրած նյութերից:

Ուսումնական պարապմունքների լսումների հիման վրա դասալսողների կողմից լրացվել են դասալսումների ձևաթղթերը (ըստ դրանց լրացման ուղեցույցի), կազմվել են սովորողների ուսումնառության, ուսուցիչների դասավանդման և կրթության բովանդակային կազմակերպման որակի վերաբերյալ եզրակացություններ:

Տեսչական մարմնի կողմից դասալսող մասնագետների ներկայացրած տվյալները համադրվել են սովորողների գիտելիքների գնահատման արդյունքների միջին ցուցանիշների հետ՝ դասավանդման և ուսումնառության արդյունավետության գնահատաման ամփոփ պատկեր ստանալու նպատակով:

Ուսուցիչների գնահատումն իրականացվել է 4 միավորային (4՝ «Գերազանց», 3՝ «Լավ», 2՝ «Բավարար», 1՝ «Անբավարար»), իսկ սովորողների գնահատումը՝ 10 միավորային սանդղակով (9-10՝ «Գերազանց», 7-8՝ «Լավ», 4-6՝ «Բավարար», 1-3՝ «Անբավարար»):

Ուսուցիչները գնահատվել են ըստ հետևյալ բնութագրիչների՝

– ուսուցիչների ՏՀՏ իմացությունն ու կիրառումը ուսուցման ընթացքում՝ ըստ դասալսումների արդյունքների.

– դասերի արդյունավետության միջին գնահատականը՝ ըստ դասալսումների արդյունքների.

– ուսուցիչների դասավանդած 6-րդ, 9-րդ և 11-րդ դասարաններում տրված գրավոր աշխատանքներից «Անբավարար» գնահատված սովորողների միջին տոկոսային թվի հաշվարկային գնահատականը.

– ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքներից և նույն սովորողների՝ տվյալ առարկայի նախորդ տարվա տարեկան «Անբավարար» գնահատականների տարբերության հաշվարկային միավորը:

Այս համատեքստում նշված 20 դպրոցներում դասալսումներ են իրականացվել **118**՝ հայոց լեզվի և գրականության **60** և մաթեմատիկայի **58** ուսուցիչների մոտ: Յուրաքանչյուր ուսուցչի մոտ իրականացվել է առնվազն 3 դասալսում:

Ուսուցիչների և սովորողների գնահատման միջին արդյունքներն ըստ առարկաների ներկայացված են աղյուսակ 1-ում.

Աղյուսակ 1.

Գնահատման միջին արդյունքներ՝ ըստ առարկաների		
	Հայոց լեզու	***Մաթեմատիկա***
Ուսուցիչներ	*2.8 («Լավ»)*	*2.3 («Բավարար»)*
Սովորողներ	*5.9 («Բավարար»)*	*4.2 («Բավարար»)*

Դասալսումների արդյունքում՝

հայոց լեզվի 60 ուսուցիչներից «Գերազանց» են գնահատվել 9-ը (**15%**),

«Անբավարար»՝ 2-ը (**3%**),

մաթեմատիկայի 58 ուսուցիչներից «Գերազանց» են գնահատվել 3-ը (**5%**), «Անբավարար»՝ 2-ը (**3%**):

2. ԴԱՍԱԼՍՄԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ

Ուսուցիչների կողմից վարած դասերի արդյունավետությունը գնահատվել է՝ ըստ դասալսման գործիքակազմի:

Դասալսման գործիքակազմը բաղկացած է դասալսման և եզրակացության ձևաթղթերից:

Դասալսման ձևաթուղթը ներառում է ընդհանուր տեղեկություններ դպրոցի, դասավանդող ուսուցչի, դասալսող մասնագետի, դասավանդվող առարկայի, դասարանի/դասաժամի, սովորողների ընդհանուր թվի, դասին ներկա սովորողների թվի, նախորդ և տվյալ դասերի թեմաների վերաբերյալ տեղեկություններ և բաղկացած է երեք՝ «Ա) Ուսումնական նպաստավոր միջավայր», «Բ) Դասավանդում», «Գ) Կարողունակությունների ձևավորում» բաժիններից: Գնահատումն իրականացվել է 4 միավորային սանդղակով՝ ըստ բոլոր բնութագրիչների: Որոշ բնութագրիչների դեպքում կատարվել է «Չ/Պ» (չի պահանջվում, վերաբերելի չէ) գրառումը: Դասալսման ձևաթղթի գործածման համար դասալսողներին տրամադրվել է համապատասխան ուղեցույց:

Եզրակացությունը բաղկացած է «Ուսուցում», «Եզրակացություն», «Գնահատում» հավելվածներից:

Մասնավորապես՝

1. **«Ուսուցում»** հավելվածի միջոցով դասալսողի կողմից ներկայացվել է ուսուցման ընդհանուր նկարագիրը՝ ըստ «Դասալսման արդյունքում միջին գնահատական», «Գնահատման հիմնավորում՝ ըստ փաստերի», «Եզրահանգում», «Տրամադրված մեթոդական աջակցություն» բնութագրիչների:

2. **«Եզրակացություն»** հավելվածի միջոցով դասալսող մասնագետի կողմից, ըստ դասալսման արդյունքների, ներկայացվել է եզրակացություն ուսումնական նպաստավոր միջավայրի, դասավանդման, սովորողների մոտ կարողունակությունների ձևավորման վերաբերյալ:

3. **«Գնահատում»** հավելվածի միջոցով տրվել է ուսուցչի վերջնական գնահատականը, որի համար հիմք են հանդիսացել դասալսող մասնագետի եզրակացության և գրավոր աշխատանքների արդյունքները:

Ուսուցչի վերջնական գնահատականը ձևավորվել է տեսչական մարմնում՝ այդ ուսուցիչների դասավանդած դասարաններում տեսչական մարմնի կողմից տրված գրավոր աշխատանքների գնահատականների, նույն սովորողների՝ տվյալ առարկայի նախորդ տարվա տարեկան գնահատականների համադրման արդյունքում:

Ինչպես արդեն նշվեց, դասալսման գործընթացը գնահատվել է՝ ըստ 3 խմբի բնութագրիչների.

Ա) Ուսումնական նպաստավոր միջավայր

Ուսումնական միջավայրի գնահատման գործընթացում հաշվի են առնվել դասարանի կահավորանքը, դասավանդողների հաղորդակցման մշակույթը և դասարանի ու դասաժամի կառավարումը դասավանդողների կողմից:

Բ) Դասավանդում

Դասավանդման գործընթացը գնահատելիս հաշվի են առնվել ուսուցչի կողմից դասի խթանման, սովորողների կողմից նյութի ընկալման ստուգման և գնահատման, հետադարձ կապի ապահովման և տնային աշխատանքի հանձնարարման ու ստուգման ռազմավարությունների ու մեթոդների կիրառումը:

Գ) Կարողունակությունների ձևավորում

Սովորողների կարողունակությունների ձևավորման գործընթացը գնահատելիս հաշվի են առնվել դասավանդողի կողմից սովորողների քննադատական և ստեղծագործական մտածողության, ինքնուրույնության և համագործակցության ձևավորմանը միտված ռազմավարությունների ու մեթոդների կիրառումը:

Գնահատման արդյունքում առկա է հետևալ թվային պատկերը՝ ըստ ձևաթղթի բնութագրիչների և առարկաների (տե՛ս աղյուսակ 2).

Աղյուսակ 2.

Ուսուցիչների գնահատման միջին արդյունքներ՝ ըստ դասալսման ձևաթղթի պահանջների և դասալսողների կողմից ներկայացված եզրակացության		
Բնութագրիչներ	***Հայոց լ. և գրականություն***	***Մաթեմատիկա***
Ուսումնական նպաստավոր միջավայր	*3.4 («Լավ»)*	*3.3 («Լավ»)*
Դասավանդում	*3.3 («Լավ»)*	*3.2 («Լավ»)*
Կարողունակությունների ձևավորում	*2.8 («Լավ»)*	*3 («Լավ»)*

Չնայած քանակական վերլուծությունը ցույց է տալիս, որ դասերի արդյունավետությունը՝ ըստ 3 խմբի բաղադրիչների, գնահատվել է «Լավ», ինչը դրական է, սակայն որակական տվյալները՝ հիմքերը, եզրակացությունները, մեթոդական աջակցության վերաբերյալ տեղեկատվությունը ցույց են տալիս, որ առկա են նաև խնդիրներ, որոնց լուծումը կարող է էապես դրական ազդեցություն ունենալ դասավանդման և ուսումնառության արդյունավետության բարձրացման վրա:

3. ԴԱՍԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ՝ ԸՍՏ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԻ

Ա) Ուսումնական նպաստավոր միջավայր

Դասալսման գործընթացի գնահատման բնութագրիչների առաջին խումբը, ինչպես արդեն իսկ նշվել է, վերաբերում է ուսումնական նպաստավոր միջավայրին: Մասնավորապես, գնահատվել են դասապրոցեսի ընթացքում դասարանի կահավորանքը, ուսուցիչների հաղորդակցման մշակույթը, ինչպես նաև նրանց կողմից դասարանի և դասաժամի կառավարումը:

Հայոց լեզվի դասաժամերին դասարանի կահավորանքի գնահատման միջին արդյունքներն, ըստ դպրոցների, ներկայացված են գծապատկեր 1-ում՝

Գծապատկեր 1



Ըստ գնահատման արդյունքների միջինացված տվյալների՝ հայոց լեզվի դասերին դասարանի կահավորանքը գնահատվել է «Գերազանց» 11, «Լավ»՝ 9 դպրոցներում:

Ըստ գծապատկեր 1-ի տվյալների՝ ամենաբարձր արդյունքը գրանցվել է Գորիսի թիվ 1 ավագ և Իջևանի թիվ 4 հիմնական դպրոցներում, ամենացածր արդյունքը՝ Վանաձորի թիվ 20 և Գյումրու թիվ 38 հիմնական դպրոցներում:

Մաթեմատիկայի դասաժամերին դասարանի կահավորանքի գնահատման միջին արդյունքներն, ըստ դպրոցների, ներկայացված են գծապատկեր 2-ում՝

Գծապատկեր 2



Ըստ Գծապատկեր 2-ի տվյալների՝ դասարանի կահավորանքը մաթեմատիկայի դասերին «Գերազանց» է գնահատվել 6, «Լավ»՝ 12, «Բավարար»՝ 2 դպրոցներում:

Ամենաբարձր արդյունքը գրանցվել է Արմավիրի թիվ 8 հիմնական դպրոցում, ամենացածր արդյունքը՝ Իջևանի թիվ 3 հիմնական և Դիլիջանի թիվ 5 միջնակարգ դպրոցներում:

Հայոց լեզվի դասաժամերին ուսումնական միջավայրի գնահատման միջին արդյունքներն, ըստ դպրոցների, ներկայացված է գծապատկեր 3-ում՝

Գծապատկեր 3



Ըստ գնահատման արդյունքների միջինացված տվյալների՝ հայոց լեզվի դասերին ուսումնական նպաստավոր միջավայրը «Գերազանց» և «Լավ» են գնահատվել 10-ական դպրոցներում: Ըստ գծապատկեր 3-ի տվյալների՝ ամենաբարձր արդյունքը գրանցվել է Գորիսի թիվ 1 ավագ դպրոցում, ամենացածր արդյունքը՝ Գյումրու թիվ 38 հիմնական դպրոցում:

Մաթեմատիկայի դասաժամերին ուսումնական միջավայրի գնահատման միջին արդյունքներն, ըստ դպրոցների, ներկայացված են գծապատկեր 4-ում՝

Գծապատկեր 4



Ըստ գնահատման արդյունքների միջինացված տվյալների՝ մաթեմատիկայի դասերին ուսումնական նպաստավոր միջավայրը «Գերազանց» է գնահատվել 7, «Լավ»՝ 13 դպրոցներում: Ըստ գծապատկեր 4-ի տվյալների՝ ամենաբարձր արդյունքը գրանցվել է Գորիսի թիվ 1 ավագ դպրոցում, ամենացածր արդյունքը՝ Դիլիջանի թիվ 5 միջնակարգ և Իջևանի թիվ 3 հիմնական դպրոցներում:

Համադրվել են ուսումնական միջավայրի գնահատման արդյունքներն՝ ըստ առարկաների և գնահատման բնութագրիչների (Գծապատկեր 5):

Գծապատկեր 5



Համաձայն Գծապատկեր 5-ի տվյալների՝ գնահատման արդյունքներն ավելի ցածր են մաթեմատիկայից:

Համեմատաբար ցածր արդյունքներ գրանցվել են «Դասարանի կահավորանք» բնութագրիչից: Ի տարբերություն հայոց լեզվի դասաժամերի՝ մաթեմատիկայի դասաժամերին գնահատման ցածր արդյունքներ են գրանցվել նաև «Դասարանի և դասաժամի կառավարում» բնութագրիչից:

Կորելյացիոն վերլուծություն է իրականացվել հայոց լեզվի և մաթեմատիկայի դասաժամերին «Ուսումնական նպաստավոր միջավայր» բաղադրիչի, «Դասարանի կահավորանք», «Հաղորդակցման մշակույթ», «Դասարանի և դասաժամի կառավարում» բնութագրիչների միջին գնահատականների միջև:

Կորելյացիայի գործակիցներն, ըստ բնութագրիչների և առարկաների, ներկայացված են աղյուսակներ 3-ում և 4-ում.

Աղյուսակ 3

«Ուսումնական նպաստավոր միջավայր» բաղադրիչի կորելյացիոն կապը գնահատման բնութագրիչների հետ			
Առարկաներ/ բնութագրիչներ	*Դասարանի կահավորանք*	*Հաղորդակցման մշակույթ*	*Դասարանի և դասաժամի կառավարում*
Հայոց լեզու	*0.759*	*0.757*	*0.914*
Մաթեմատիկա	*0.842*	*0.806*	*0.806*

Աղյուսակ 4

«Ուսումնական նպաստավոր միջավայր» բաղադրիչի գնահատման բնութագրիչների կորելյացիոն կապ			
Առարկաներ/ բնութագրիչներ	*Դասարանի կահավորանք-Հաղորդակցման մշակույթ*	*Հաղորդակցման մշակույթ-Դասարանի և դասաժամի կառավարում*	*Հաղորդակցման մշակույթ-Դասարանի և դասաժամի կառավարում*
Հայոց լեզու	*0.274*	*0.504*	*0.653*
Մաթեմատիկա	*0.556*	*0.483*	*0.482*

Բնական է, որ «Ուսումնական նպաստավոր միջավայրի» միջին գնահատականները խիստ կապի մեջ պետք է լինեն նշված 3 բնութագրիչների գնահատման միջին արդյունքների հետ, սակայն կորելյացիոն վերլուծությունը (աղյուսակ 3) ցույց է տալիս, որ հայոց լեզվի դասաժամերին կապը արտահայտված է *«Դասարանի և դասաժամի կառավարում»* բնութագրիչի հետ, իսկ մաթեմատիկայի դասաժամերին՝ «*Դասարանի կահավորանք*» բնութագրիչի հետ (գծապատկեր 6):

Գծապատկեր 6



Այսինքն, դասալսումների արդյունքում, ըստ «Ուսումնական նպաստավոր միջավայր» բաղադրիչի, բարձր են գնահատվել հայոց լեզվի այն ուսուցիչները, որոնք համեմատաբար բարձր են գնահատվել՝ ըստ *«Դասարանի և դասաժամի կառավարում» բնութագրիչի:* Մաթեմատիկայի դասաժամերին՝ ըստ «Ուսումնական նպաստավոր միջավայր» բաղադրիչի՝ համեմատաբար բարձր են գնահատվել այն ուսուցիչները, որոնք բարձր են գնահատվել ըստ «*Դասարանի կահավորանք*» բնութագրիչի (Գծապատկեր 7):

Գծապատկեր 7



Իհարկե «Ուսումնական նպաստավոր միջավայր» բաղադրիչի գնահատման բնութագրիչների կապը միմյանց հետ այնքան էլ արտահայտված չէ (գծապատկեր 8), այնուամենայնիվ, աղյուսակ 4-ի տվյալները հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ հայոց լեզվի այն ուսուցիչները, որոնց դասերին բարձր է գնահատվել *հաղորդակցման մշակույթը*, համեմատաբար բարձր է գնահատվել նաև *դասարանի և դասաժամի կառավարումը: Այսինքն, ովքեր համեմատաբար լավ են հաղորդակցվում, համեմատաբար լավ են կառավարում դասարանը և դասաժամը:*

Գծապատկեր 8



Չնայած մաթեմատիկայի ուսուցիչների գնահատականների կորելյացիոն բնութագրիչները միմյանցից քիչ են տարբերվում, այնուամենայնիվ, համեմատաբար լավ *հաղորդակցվող* մաթեմատիկայի ուսուցիչների դասաժամերին լավ է նաև *դասարանի կահավորանքը (գծապատկեր 9)*:

Գծապատկեր 9



Չնայած դասալսողները հիմնականում նշել են, որ թե՛ հայոց լեզվի, թե՛ մաթեմատիկայի դասերին ուսումնական միջավայրը համապատասխանում է սահմանված պահանջներին, այնուամենայնիվ, ընդհանրացնելով ցածր և բարձր գնահատումների արդյունքում նրանց կողմից ներկայացված դիտարկումները՝ ստացվել է այսպիսի պատկեր.

ցածր գնահատված դպրոցներում՝

– ուսումնական նյութերը բազմազան չեն,
– ուսուցիչները սահմանափակվում են միայն դասագրքով,
– չեն կիրառվում ՏՀՏ գործիքներ,
– ոչ միշտ են սահմանվում աշխատանքի կանոններ,
– դասասենյակի կահավորանքը հաճախ հնարավոր չէ հարմարեցնել խմբային կամ այլ աշխատանքի համար՝ նստարանների մոտիկ լինելու պատճառով,
– սովորողներին երբեմն ուղղվում են բարձր ու կոպիտ տոնով դիտողություններ,
– դասի պլանավորումն ու ժամանակի կառավարումը արդյունավետ չեն,
– դասի որոշ փուլեր ժամանակի ոչ ճիշտ բաշխման արդյունքում ամբողջական չեն իրագործվում,
– որոշ դեպքերում անհրաժեշտ դիդակտիկ նյութերը առկա են, սակայն ամբողջովին չեն կիրառվում, դասի ժամանակը մասամբ է արդյունավետ օգտագործվում:

բարձր գնահատված դպրոցներում՝

– դասի կահավորանքը համապատասխանում է դասին, մատուցվող նյութին,
– առկա են պաստառներ, նկարներ, զննական պարագաներ,
– դասին առկա է համակարգչային ձևավորում,
– առկա դիդակտիկ նյութերը հարմարեցված են սովորողների կարիքներին,

– դասավանդողներն ունեն համապատասխան կեցվածք, ոճ,
– դասի ժամանակը հիմնականում արդյունավետ է օգտագործվում,
– սովորողների հանդեպ հարգանք է դրսևորվում, արձագանքվում է նրանց կարիքներին, չի ցուցաբերվում խտրական վերաբերմունք,
– սահմանվում են աշխատանքային հստակ կանոններ, հաճախ է իրականացվում դրական վարքագծի խթանում, մատնանշվում են սովորողների ջանքերը:

Բ) Դասավանդում

Դասալսման գործընթացի գնահատման բնութագրիչների երկրորդ խումբը վերաբերում է դասապրոցեսի ընթացքում դասի խթանման, նյութի ընկալման ստուգման և գնահատման, հետադարձ կապի ապահովման, ինչպես նաև տնային աշխատանքների հետ կապված աշխատանքներին:

Հայոց լեզվի դասաժամերին դասարանի կահավորանքի գնահատման միջին արդյունքներն, ըստ դպրոցների, ներկայացված են գծապատկեր 10-ում՝

Գծապատկեր 10



Ըստ գնահատման արդյունքների միջինացված տվյալների՝ հայոց լեզվի դասերին դասավանդումը «Գերազանց» է գնահատվել 6, «Լավ»՝ 14 դպրոցներում:

Ըստ գծապատկեր 6-ի տվյալների՝ ամենաբարձր արդյունքը գրանցվել է Գորիսի թիվ 1 ավագ և Արմավիրի թիվ 8 հիմնական դպրոցներում, ամենացածր արդյունքը՝ Երևանի թիվ 75 հիմնական դպրոցում:

Մաթեմատիկայի դասաժամերին դասավանդման գնահատման միջին արդյունքներն, ըստ դպրոցների, ներկայացված են գծապատկեր 11-ում՝

Գծապատկեր 11



Ըստ գնահատման արդյունքների (գծապատկեր 11)՝ մաթեմատիկայի դասերին դասավանդումը «Գերազանց» է գնահատվել 4, «Լավ»՝ 15, «Բավարար»՝ 1 դպրոցներում: Ամենաբարձր արդյունքը՝ «Գերազանց»՝ գրանցվել է Գորիսի թիվ 1 ավագ դպրոցում, ամենացածր արդյունքը՝ «Բավարար»՝ Դիլիջանի թիվ 5 միջնակարգ դպրոցում:

Համադրվել են «Դասավանդում» բաղադրիչի գնահատման արդյունքներն՝ ըստ առարկաների և գնահատման բնութագրիչների (Գծապատկեր 12):

Գծապատկեր 12



Համաձայն գծապատկեր 12-ի տվյալների՝ գնահատման արդյունքները ցածր են մաթեմատիկայից:

20 դպրոցների գնահատված ուսուցիչների միջին գնահատականներն, ըստ «Դասավանդում» բաղադրիչի բնութագրիչների, գտնվում են 3-ից 3.4 միջակայքում, այսինքն՝ գնահատվել են «Լավ»: Մաթեմատիկայի ուսուցիչները համեմատաբար ցածր են գնահատվել՝

ըստ «Դասի խթանում», ապա նաև «Հետադարձ կապ», «Նյութի ընկալման ստուգում և գնահատում» բնութագրիչների:

Կորելյացիոն վերլուծություն է իրականացվել հայոց լեզվի և մաթեմատիկայի դասաժամերին «Դասավանդում» բաղադրիչի, «Դասի խթանում», «Նյութի ընկալման ստուգում և գնահատում», «Հետադարձ կապ», «Տնային աշխատանք» բնութագրիչների միջին գնահատականների միջև: Կորելյացիայի գործակիցներն՝ ըստ բնութագրիչների և առարկաների՝ ներկայացված են աղյուսակներ 5-ում և 6-ում.

Աղյուսակ 5

«Դասավանդում» բաղադրիչի կորելյացիոն կապը գնահատման բնութագրիչների հետ		
Բնութագրիչներ/ Առարկաներ	***Հայոց լեզու***	***Մաթեմատիկա***
Դասի խթանում	***0.873***	**0.877**
Նյութի ընկալման ստուգում և գնահատում	***0.898***	**0.889**
Հետադարձ կապ	***0.876***	**0.896**
Տնային աշխատանք	***0.807***	**0.858**

Տրամաբանական է, որ «Դասավանդում» բաղադրիչի միջին գնահատականները խիստ կապի մեջ պետք է լինեն նշված 4 բնութագրիչների գնահատման միջին արդյունքների հետ, սակայն կորելյացիոն վերլուծությունը (աղյուսակ 5) ցույց է տալիս, որ հայոց լեզվի դասաժամերին կապը առավել արտահայտված է *«Նյութի ընկալման ստուգում և գնահատում»* բնութագրիչի հետ (գծապատկեր 13), իսկ մաթեմատիկայի դասաժամերին՝ «*Հետադարձ կապ*» բնութագրիչի հետ (գծապատկեր 14): Այսինքն, դասալսումների արդյունքում՝ ըստ «Դասավանդում» բաղադրիչի՝ առավել բարձր են գնահատվել հայոց լեզվի այն ուսուցիչները, որոնք մեծ ուշադրություն են դարձնում նյութի ընկալման ստուգման և գնահատման վրա և մաթեմատիկայի այն ուսուցիչները, որոնք առավել ուշադրություն են դարձրել հետադարձ կապի ապահովմանը:

Գծապատկեր 13



Գծապատկեր 14



Ինչպես ներկայացված է գծապատկերներ 13-ում և 14-ում հայոց լեզվի ուսուցիչների գնահատականներն ըստ «Դասավանդում» բաղադրիչի խիստ կապի մեջ են *«Նյութի ընկալման ստուգում և գնահատում»* բնութագրիչի գնահատականների հետ, մաթեմատիկայի դեպքում նույն բաղադրիչի կապն արտահայտված է *«Հետադարձ կապ»* բնութագրիչի գնահատականների հետ: Երկու դեպքում էլ գրաֆիկներն միանման են փոփոխվում:

Աղյուսակ 6

«Դասավանդում» բաղադրիչի գնահատման բնութագրիչների կորելյացիոն կապ		
Բնութագրիչներ/ Առարկաներ	***Հայոց լեզու***	***Մաթեմատիկա***
Դասի խթանում - Նյութի ընկալման ստուգում և գնահատում	***0.749***	***0.755***
Դասի խթանում - Հետադարձ կապ	***0.676***	***0.694***
Դասի խթանում - Տնային աշխատանք	***0.630***	***0.640***
Նյութի ընկալման ստուգում և գնահատում - Հետադարձ կապ	***0.760***	***0.733***
Նյութի ընկալման ստուգում և գնահատում - Տնային աշխատանք	***0.570***	***0.650***
Հետադարձ կապ - Տնային աշխատանք	***0.574***	***0.711***

Աղյուսակ 6-ի տվյալները հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ հայոց լեզվի այն ուսուցիչները, որոնց դասերին բարձր է գնահատվել *նյութի ընկալման ստուգումն ու գնահատումը,* համեմատաբար բարձր է գնահատվել նաև *հետադարձ կապի ապահովումը (Գծապատկեր 15):*

Գծապատկեր 15



Մաթեմատիկայի այն ուսուցիչները, որոնց դասերին բարձր է գնահատվել *դասի խթանումը*, համեմատաբար բարձր է գնահատվել նաև *նյութի ընկալման ստուգումն ու գնահատումը: Այսինքն, ովքեր համեմատաբար կարևորում են դասի խթանման գործընթացը՝ մեծ ուշադրություն են դարձնում նյութի ընկալման ստուգման և գնահատման գործընթացների վրա:*

Գծապատկեր 16



Ըստ «Դասավանդում» բաղադրիչի **համեմատաբար ցածր գնահատված ուսուցիչների** մասով դասալսողները նշել են՝

- դասի նպատակները և վերջնարդյունքները հաճախ փոխկապակցված և չափելի չեն,
- հաճախ չեն ներկայացվում դասի վերջնարդյունքները,
- ուսուցիչների կողմից ընտրված հարցերն ու առաջադրանքները խորքային չեն ստուգում սովորողների ընկալման և իմացության մակարդակը,

– հետադարձ կապի ժամանակ սովորողներին հնարավորություն չի տվում ինքնուրույն հասկանալու իրենց սխալները,
– չեն կիրառվում սովորողների ուսումնառությունը, գիտելիքների ամրապնդումը և ներգրավվածությունը խթանող ակտիվ մեթոդներ,
– որոշ դասերի ընթացքում դասի միջառարկայական, ներառարկայական կապերը, գիտելիքի և առօրյայի հետ կապը հստակ չեն արտացոլվում,
– իմացության ստուգումը հիմնականում հիմնավոր միավորային կամ ձևավորող գնահատմամբ չի իրականացվում,
– ստուգվում է ոչ բոլոր սովորողների իմացության մակարդակը, ոչ բոլորն են ներգրավված դասին,
– հետադարձ կապի ապահովումը թույլ է, տնային աշխատանքները տարբերակված չեն,
– առաջադրանքների ստուգման համար բավարար ժամանակ չի հատկացվում:

Բարձր գնահատված ուսուցիչների մոտ պատկերն այսպիսին է՝
– դասի նպատակները սահմանվում են հստակ և իրատեսական,
– սովորողներն ընդգրկված են դասապրոցեսին,
– օգտագործվում են դասի նպատակներից բխող մեթոդներ, հնարներ և միջոցներ,
– ուսումնական նյութը, նոր հասկացությունները մատուցվում են պարզ ու մատչելի,
– կիրառվում են գնահատման տարբեր մեթոդներ, գնահատականները հիմնավորվում են,
– վերջնարդյունքները ապահովվում են,
– հանձնարարվում են ստեղծագործական միտքը զարգացնող առաջադրանքներ,
– ստեղծվում են ներառարկայական և միջառարկայական կապեր,
– տնային աշխատանքները նպատակային են:

Գ) Կարողունակությունների ձևավորում

Սովորողների «Կարողունակությունների ձևավորում» բաղադրիչի գնահատումն իրականացվում է՝ ըստ սովորողների մոտ քննադատական և ստեղծագործական մտածողության, ինքնուրույնության և համագործակցության ձևավորման բնութագրիչների գնահատումների:

Հայոց լեզվի դասաժամերին «Կարողունակությունների ձևավորում» բաղադրիչի գնահատման միջին արդյունքներն, ըստ դպրոցների, ներկայացված են գծապատկեր 17-ում՝

Գծապատկեր 17



Ըստ գնահատման արդյունքների միջինացված տվյալների՝ հայոց լեզվի դասերին կարողունակությունների ձևավորումը «Գերազանց» և «Լավ» են գնահատվել 9-ական, «Բավարար»՝ 2 դպրոցներում: Ըստ գծապատկեր 6-ի տվյալների՝ ամենաբարձր արդյունքը գրանցվել է Գորիսի թիվ 1 ավագ դպրոցում, ամենացածր արդյունքը՝ Երևանի թիվ 75 հիմնական դպրոցում:

Մաթեմատիկայի դասաժամերին կարողունակությունների ձևավորման գնահատման միջին արդյունքներն, ըստ դպրոցների, ներկայացված են գծապատկեր 18-ում՝

Գծապատկեր 18



Ըստ գնահատման արդյունքների (գծապատկեր 18)՝ մաթեմատիկայի դասերին կարողունակությունների ձևավորումը «Գերազանց» է գնահատվել 2, «Լավ»՝ 16, «Բավարար»՝

2 դպրոցներում: Ամենաբարձր արդյունքը՝ «Գերազանց»՝ գրանցվել է Գորիսի թիվ 1 ավագ դպրոցում, ամենացածր արդյունքը՝ «Բավարար»՝ Վանաձորի թիվ 27 հիմնական դպրոցում:

Համադրվել են «Կարողունակությունների ձևավորում» բաղադրիչի գնահատման արդյունքներն՝ ըստ առարկաների և գնահատման բնութագրիչների (Գծապատկեր 19):

Գծապատկեր 19



Համաձայն գծապատկեր 19-ի տվյալների՝ գնահատման արդյունքները ցածր են մաթեմատիկայից: 20 դպրոցների գնահատված ուսուցիչների միջին գնահատականներն, ըստ «Կարողունակությունների ձևավորում» բաղադրիչի բնութագրիչների, գտնվում են 2.8-ից 3.22 միջակայքում, այսինքն գնահատվել են «Լավ»:

Կորելյացիոն վերլուծություն է իրականացվել հայոց լեզվի և մաթեմատիկայի դասաժամերին «Կարողունակությունների ձևավորում» բաղադրիչի, «Ինքնուրույնություն և համագործակցություն», «Քննադատական և ստեղծագործական մտածողություն» բնութագրիչների միջին գնահատականների միջև: Կորելյացիայի գործակիցներն, ըստ բնութագրիչների և առարկաների, ներկայացված են աղյուսակներ 7-ում և 8-ում.

Աղյուսակ 7

«Կարողունակությունների ձևավորում» բաղադրիչի կորելյացիոն կապը գնահատման բնութագրիչների հետ		
Առարկաներ/ բնութագրիչներ	***Քննադատական և ստեղծագործական մտածողություն***	***Ինքնուրույնություն և համագործակցություն***
Հայոց լեզու	***0.884***	***0.885***
Մաթեմատիկա	***0.892***	***0.822***

Աղյուսակ 8

«Ինքնուրույնություն և համագործակցություն», «Քննադատական և ստեղծագործական մտածողություն» բնութագրիչների կորելյացիոն կապն՝ ըստ առարկաների	
Հայոց լեզու	*Մաթեմատիկա*
0.565	*0.648*

Հայոց լեզվի դեպքում «Կարողունակությունների ձևավորում» բաղադրիչի միջին գնահատականների վրա «Ինքնուրույնություն և համագործակցություն», «Քննադատական և ստեղծագործական մտածողություն» բնութագրիչների միջին գնահատականների ազդեցությունն համաչափ է: Սակայն, մաթեմատիկայի դեպքում «Քննադատական և ստեղծագործական մտածողություն» բնութագրիչի կապը արտահայտված է:

Այսինքն, «Կարողունակությունների ձևավորումը» համեմատաբար բարձր է գնահատվել այն ուսուցիչների մոտ, ովքեր բարձր են գնահատվել ըստ «Քննադատական և ստեղծագործական մտածողություն» բնութագրիչի:

Ըստ աղյուսակ 8-ի տվյալների բնութագրիչների՝ կապն առավել արտահայտված է մաթեմատիկայի դեպքում: Ինչը նշանակում է, որ մաթեմատիկայի այն ուսուցիչները, ովքեր մեծ ուշադրություն են դարձնում սովորողների քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացման վրա՝ կարևորում են նրանց ինքնուրույնությունն ու համագործակցությունը:

Ըստ «Կարողունակությունների ձևավորում» բաղադրիչի համեմատաբար **ցածր գնահատված ուսուցիչների մասով դասալսողները նշել են՝**

– դասավանդման գործընթացում սովորողների կարողունակությունների ձևավորման աշխատանքները մասամբ են համապատասխանում պահանջներին,

– ոչ բոլոր սովորողներն են ունեցել սեփական կարծիքը հայտնելու հնարավորություն,

– քննադատական և ստեղծագործական մտածողության, ինքնուրույնության և համագործակցության ձևավորմանն ուղղված ռազմավարություններ մասամբ են կիրառվել,

– չեն տրվել քննադատական և ստեղծագործական մտածողությունը զարգացնող, վերլուծություն պահանջող խնդիրներ ու առաջադրանքներ,

– չեն պահանջվել հիմնավորված պատասխաններ, չեն կիրառվել քննադատությունն ու ստեղծագործականությունը խթանող մեթոդներ,

– ոչ բոլոր դեպքերում է համագործակցություն տեղի ունեցել, իսկ իրականացված խմբային աշխատանքներում ոչ բոլոր սովորողներն են ներգրավվել:

Բարձր գնահատված ուսուցիչների մոտ պատկերն այսպիսին է՝

– դասավանդողների կողմից հաճախ հանձնարարվում են քննադատական, ստեղծագործական միտքը զարգացնող աշխատանքներ,

– ուսուցիչների կողմից հանձնարարված խմբային կամ զույգային աշխատանքները նպաստում են սովորողների համագործակցային կարողությունների զարգացմանն ու միջանձնային հարաբերությունների ձևավորմանը,

– հաճախ առաջարկվում է աշակերտներին միմյանց օգնել, ինչի համար նրանք խրախուսվում են,

– ստեղծում են զույգերով, խմբերով աշխատելու հնարավորություններ, որը նպաստում է նաև համագործակցային կարողությունների և միջանձնային հարաբերությունների ձևավորմանը՝ հանդուրժողականությանն ու ընկերասիրությանը,

– սովորողներին տալիս են տարբեր դերեր և պարտականություններ, որոնք էական նշանակություն ունեն դասի յուրացման համար, ինչը նպաստում է աշակերտակենտրոն ուսուցմանը:

Այսպիսով, դասերի արդյունավետության միջին գնահատականներն, ըստ դասալսումների արդյունքների, ներկայացվում են գծապատկեր 20-ում.

Գծապատկեր 20



Միջին գնահատականներն, ըստ դպրոցների, ներկայացված են գծապատկերներ 21-ում և 22-ում:

Գծապատկեր 21



Հայոց լեզվի դասերի արդյունավետության միջին գնահատականն ըստ դասալսումների արդյունքների (գծապատկեր 21) «Գերազանց» և «Լավ» են գնահատվել 10-ական դպրոցներում: Ամենաբարձր արդյունքը՝ «Գերազանց»՝ գրանցվել է Գորիսի թիվ 1 ավագ դպրոցում, ամենացածր արդյունքը՝ «Բավարար»՝ Երևանի թիվ 75 հիմնական դպրոցում:

Գծապատկեր 22



Մաթեմատիկայի դասերի արդյունավետության միջին գնահատականն, ըստ դասալսումների արդյունքների (գծապատկեր 22), «Գերազանց» են գնահատվել 4, «Լավ»՝ 14, «Բավարար»՝ 2 դպրոցներում: Ամենաբարձր արդյունքը՝ «Գերազանց»՝ գրանցվել է կրկին Գորիսի թիվ 1 ավագ դպրոցում, ամենացածր արդյունքը՝ «Բավարար»՝ Վանաձորի թիվ 27 հիմնական և Դիլիջանի թիվ 5 միջնակարգ դպրոցներում:

Դասալսողների կողմից տրամադրված դիտարկումների, եզրակացությունների, որակական տվյալների վերլուծության արդյունքում առանձնացված հիմնական խնդիրներն, ըստ բնութագրիչների, այսպիսին են.

Ա) Ուսումնական նպաստավոր միջավայր

– Դասավանդման գործընթացում հազվադեպ են կիրառվում ուսումնաօժանդակ բազմազան նյութեր, հաճախ միայն դասագրքով են առաջնորդվում:

– ՏՀՏ միջոցները դասավանդման գործընթացում կա՛մ չեն կիրառվում, կա՛մ հիմնականում արդյունավետ չեն կիրառվում:

– Դասարանի կահավորանքը հաճախ հարմարեցված չէ ուսումնական գործունության տեսակներին, ինչպես նաև բոլոր սովորողների կարիքներին:

– Դասավանդման գործընթացում բոլոր սովորողների նկատմամբ հարգանքի դրսևորումը, հաղորդակցման մշակույթն ունի բարելավման անհրաժեշտություն:

– Դասաժամը հաճախ չի օգտագործվում արդյունավետ դասի ոչ ճիշտ պլանավորման, մասնավորապես՝ ժամանակի ոչ ճիշտ բաշխման հետևանքով, որոշ դեպքերում էլ առկա են դասարանի կառավարման խնդիրներ:

– Հաճախ դասարանում չեն սահմանվում աշխատանքային հստակ կանոններ՝ ուսումնական գործունեության տարբեր տեսակներին համապատասխան:

Բ) Դասավանդում

– Դասերին հաճախ չեն ներկայացվում կամ հստակ սահմանվում դասի նպատակները, վերջնարդյունքները, ինչպես նաև որոշ դեպքերում դասարանական հանձնարարականները, հարցադրումները, կիրառվող մեթոդները միտված չեն վերջնարդյունքների ամբողջական ապահովմանը:

– Որոշ դեպքերում դասերը չեն արտացոլում միջառարկայական կապերը և առօրյայի հետ կապը, կիրառական նշանակություն ունեցող հարցեր և առաջադրանքներ հազվադեպ են առաջադրվում:

– Բոլոր սովորողները ներգրավված չեն դասերին, կան պասիվ դիտորդներ:

– Սովորողների ընկալման կամ իմացության մակարդակի ստուգումը հաճախ մակերեսային է իրականացվում, չեն պահանջվում հիմնավորումներ:

– Չեն կիրառվում գնահատման տարբեր ձևեր և մեթոդներ, մասնավորապես՝ ձևավորող գնահատում գրեթե չի իրականացվում, հաճախ գնահատականները չեն հիմնավորվում, մեկնաբանվում, սովորողների առաջընթացը, հաջողությունները հազվադեպ են մատնանշվում. խրախուսման ձևեր հազվադեպ են կիրառվում:

– Հետադարձ կապի ապահովումը հիմնականում թույլ է, տնային առաջադրանքները ոչ միշտ են ստուգվում, ոչ բոլոր անհասկանալի հարցերին է անդրադարձ կատարվում:

Գ) Կարողունակությունների ձևավորում

– Հաճախ առաջադրվող հարցերն ու առաջադրանքները միտված չեն սովորողների քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացմանը.

– Հաճախ հնարավորություն չի ընձեռվում սովորողներին ինքնուրույն գտնել իրենց սխալները, գտնել նորարար և ինքնատիպ լուծումներ, հարցերին տալ հիմնավորումներ.

– Հաճախ չեն տրվում բոլոր սովորողներին իրենց սեփական կարծիքը հայտնելու, ընտրության, դերեր և պարտականություններ ստանձնելու հնարավորություններ:

– Համագործակցային մթնոլորտի ձևավորմանը նպաստող ուսումնական գործունեության տեսակների ընտրությունը հաճախ նպատակային չի իրականացվում:

4. ՈՒՍՈՒՑՉԻ՝ ՏՀՏ ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Դասալսողների կողմից գնահատվել են նաև ուսուցիչների ՏՀՏ իմացությունն ու կիրառումը ուսուցման ընթացքում: Գնահատման արդյունքները ներկայացված են գծապատկեր 23-ում:

Գծապատկեր 23



Ըստ գծապատկեր 15-ի տվյալների՝ հայոց լեզվի 10 (17%) և մաթեմատիկայի 5 (9%) ուսուցիչների ՏՀՏ իմացությունը «Անբավարար» է գնահատվել: Գնահատման միջինացված արդյունքներն, ըստ դպրոցների, ներկայացված են գծապատկերներ 24-ում և 25-ում:

Գծապատկեր 24



Հայոց լեզվի ուսուցիչների ՏՀՏ իմացությունը «Գերազանց» է գնահատվել 4, «Լավ»՝ 9, «Բավարար»՝ 5, «Անբավարար»՝ 2 դպրոցներում:

Ամենաբարձր արդյունքը՝ «Գերազանց»՝ գրանցվել է Արմավիրի թիվ 8 հիմնական դպրոցում, ամենացածր արդյունքը՝ «Անբավարար»՝ Վանաձորի թիվ 20 հիմնական դպրոցում:

Գծապատկեր 25



Մաթեմատիկայի ուսուցիչների ՏՀՏ իմացությունը «Գերազանց» է գնահատվել 2, «Լավ»՝ 11, «Բավարար»՝ 6, «Անբավարար»՝ 1 դպրոցներում:

Ամենաբարձր արդյունքը՝ «Գերազանց»՝ գրանցվել է Արմավիրի թիվ 2 հիմնական դպրոցում, ամենացածր արդյունքը՝ «Անբավարար»՝ Գյումրու թիվ 25 հիմնական դպրոցում:

5. ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Գնահատված ուսուցիչների գնահատման բնութագրիչներից են նաև՝

– ուսուցիչների դասավանդած 6-րդ, 9-րդ և 11-րդ դասարաններում ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքներից «Անբավարար» գնահատված սովորողների միջին տոկոսային թվի հաշվարկային միավորը,

– ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքների «Անբավարար» գնահատականների և նույն սովորողների՝ տվյալ առարկայի նախորդ տարվա տարեկան «Անբավարար» գնահատականների տարբերության հաշվարկային միավորը:

Նշված բնութագրիչներից առաջինի դեպքում գնահատումն իրականացվել է հետևյալ կերպ՝ եթե ուսուցչի դասավանդած դասարաններում տեսչական մարմնի կողմից տրված գրավոր աշխատանքներից «Անբավարար» գնահատված սովորողների տոկոսային թվերի (ըստ դասարանների) միջինը 0-10% միջակայքում է, ապա ուսուցիչն, ըստ այդ բնութագրիչի, գնահատվել է 4 միավոր՝ «Գերազանց», 11-20%-ի դեպքում՝ 3՝ «Լավ», 21-35%-ի դեպքում՝ 2՝ «Բավարար», 36% և ավելիի դեպքում՝ 1 միավոր՝ «Անբավարար»:

Երկրորդ բնութագրիչի պարագայում՝ եթե ուսուցչի դասավանդած դասարաններում տեսչական մարմնի կողմից տրված գրավոր աշխատանքից և նույն առարկայի նախորդ տարվա տարեկան «Անբավարար» գնահատված սովորողների տոկոսային թվերի տարբերությունը 0-10% միջակայքում է, ապա ուսուցիչն, ըստ այդ բնութագրիչի, գնահատվել է 4 միավոր՝ «Գերազանց», 11-20%-ի դեպքում՝ 3՝ «Լավ», 21-35%-ի դեպքում՝ 2՝ «Բավարար», 36% և ավելիի դեպքում՝ 1 միավոր՝ «Անբավարար»:

Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների շրջանակում տրվել են գրավոր աշխատանքներ «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») և «Հայոց լեզու» («Մայրենի») առարկաներից:

«Մաթեմատիկա» առարկայի առաջադրանքները կազմվել են Գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից, «Հայոց լեզու» առարկայից տրված թելադրության նյութերը ընտրվել են նախորդ դասարանում յուրացրած նյութերից:

Հայոց լեզվի թելադրությանը մասնակցած 2080 սովորողներից (Գծապատկեր 18) «Գերազանց» են գնահատվել 327-ը (15.7%), «Լավ»՝ 710-ը (34.2%), «Բավարար»՝ 568-ը (27.3%), «Անբավարար»՝ 475 (22.8%):

Միջին գնահատականը հայոց լեզվի թելադրությունից կազմել է 5.9 միավոր (10 միավորային սանդղակում):

Գծապատկեր 26



Մաթեմատիկայի գրավոր աշխատանքին մասնակցած 2071 սովորողներից (Գծապատկեր 27) «Գերազանց» են գնահատվել 115-ը (5.5%), «Լավ»՝ 259-ը (12.5%), «Բավարար»՝ 782-ը (37.8%), «Անբավարար»՝ 915 (44.2%):

Միջին գնահատականը մաթեմատիկայի գրավոր աշխատանքից կազմել է 4.2 միավոր:

Գծապատկեր 27



Ըստ «Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքներից «Անբավարար» գնահատված սովորողների միջին տոկոսային թվի հաշվարկային գնահատականը» չափանիշի՝ ուսուցիչների գնահատման արդյունքներն այսպիսին են.

Գծապատկեր 28



Համաձայն գծապատկեր 28-ի տվյալների՝ եթե տեսչական մարմնի կողմից տրված գրավոր աշխատանքներից «Անբավարար» գնահատված սովորողների տոկոսային թվերի (ըստ դասարանների) միջինը

– 0-10% միջակայքում է, ապա, ըստ այս չափանիշի, գնահատվել են «Գերազանց» հայոց լեզվի ուսուցիչների 20%-ը, մաթեմատիկայի ուսուցիչների 6.9%-ը,

– 36% և ավելի է, ապա գնահատվել են «Անբավարար»՝ հայոց լեզվի ուսուցիչների 20%-ը, մաթեմատիկայի ուսուցիչների 6.9%-ը:

Արդյունքները ցածր են մաթեմատիկայից:

Համաձայն այս չափանիշի՝ միջին գնահատականներն, ըստ դպրոցների, ներկայացված են գծապատկերներ 29-ում և 30-ում:

Գծապատկեր 29



Հայոց լեզվի ուսուցիչների միջին գնահատականն, ըստ տեսչական մարմնի կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքների, կազմել է «Գերազանց»՝ 3, «Լավ»՝ 5, «Բավարար»՝ 9, «Անբավարար»՝ 3 դպրոցներում:

Ամենաբարձր արդյունքը գրանցվել է Իջևանի թիվ 4 հիմնական դպրոցում, ամենացածր արդյունքը՝ Գյումրու թիվ 27 հիմնական դպրոցում (գծապատկեր 29):

Գծապատկեր 30



Ըստ նույն չափանիշի՝ մաթեմատիկայի ուսուցիչների միջին գնահատականը «Լավ» է 3, «Բավարար»՝ 5, «Անբավարար»՝ 12 դպրոցներում:

Ամենաբարձր արդյունքը գրանցվել է Գորիսի թիվ 1 ավագ դպրոցում, ամենացածր արդյունքը՝ «Անբավարար»՝ 8 (հավասար) դպրոցներում (գծապատկեր 30):

Ըստ «Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքների գնահատականների և նույն սովորողների՝ տվյալ առարկայի նախորդ տարվա տարեկան «Անբավարար» գնահատականների տարբերության» չափանիշի ուսուցիչների գնահատման արդյունքներն այսպիսին են.

Գծապատկեր 31



Համաձայն գծապատկեր 31-ի տվյալների՝ եթե տեսչական մարմնի կողմից տրված գրավոր աշխատանքների «Անբավարար» գնահատականների և նույն սովորողների՝ տվյալ առարկայի նախորդ տարվա տարեկան «Անբավարար» գնահատականների տոկոսային թվերի տարբերությունը

– 0-10% մջակայքում է, ապա, ըստ այս չափանիշի, գնահատվել են «Գերազանց» հայոց լեզվի ուսուցիչների 23.3%-ը, մաթեմատիկայի ուսուցիչների 13.8%-ը,

– 36% և ավելի է, ապա գնահատվել են «Անբավարար»՝ հայոց լեզվի ուսուցիչների 15%-ը, մաթեմատիկայի ուսուցիչների 58.6%-ը:

Արդյունքները ցածր են մաթեմատիկայից: Ըստ այս չափանիշի՝ միջին գնահատականներն, ըստ դպրոցների, ներկայացված են գծապատկերներ 32-ում և 33-ում:

Գծապատկեր 32



Հայոց լեզվի ուսուցիչների միջին գնահատականն, ըստ գրավոր աշխատանքների և տարեկան գնահատականների համադրման արդյունքների, կազմել է «Գերազանց»՝ 3, «Լավ»՝ 8, «Բավարար»՝ 8, «Անբավարար»՝ 1 դպրոցներում:

Ամենաբարձր արդյունքը գրանցվել է Իջևանի թիվ 4 հիմնական դպրոցում, ամենացածր արդյունքը՝ Երևանի թիվ 46 ավագ դպրոցում (գծապատկեր 32):

Գծապատկեր 33



Մաթեմատիկայի ուսուցիչների միջին գնահատականն, ըստ գրավոր աշխատանքների և տարեկան գնահատականների համադրման արդյունքների, կազմել է «Լավ»՝ 5, «Բավարար»՝ 6, «Անբավարար»՝ 9 դպրոցներում:

Ամենաբարձր արդյունքը գրանցվել է Գորիսի թիվ 1 ավագ դպրոցում, ամենացածր արդյունքը՝ 7 դպրոցներում (հավասար) (գծապատկեր 33):

Տեսչական մարմնի կողմից տրված գրավոր աշխատանքների և նույն սովորողների՝ նույն առարկայի նախորդ տարվա տարեկան միջին գնահատականները ներկայացված են գծապատկերներ 34-ում և 35-ում.

Գծապատկեր 34



Հայոց լեզվի թելադրությունից ամենաբարձր արդյունքը՝ «Լավ»՝ գրանցվել է Իջևանի թիվ 4 հիմնական դպրոցում, ամենացածր արդյունքը՝ Երևանի թիվ 46 ավագ դպրոցում (գծապատկեր 34):

Գծապատկեր 35



Մաթեմատիկայի գրավոր աշխատանքից ամենաբարձր արդյունքը՝ «Լավ»՝ գրանցվել է Գորիսի թիվ 1 ավագ դպրոցում, ամենացածր արդյունքը՝ «Անբավարար»՝ Արմավիրի թիվ 8 հիմնական և Արմավիրի թիվ 2 միջնակարգ դպրոցներում (գծապատկեր 35):

Կարևոր է նշել, որ մաթեմատիկայի գրավոր աշխատանքից միջին գնահատականը կազմել է «Անբավարար»՝ դպրոցներից 5 (25%)-ում, սակայն նույն սովորողների՝ նախորդ տարվա մաթեմատիկայի (հանրահաշվի) տարեկան գնահատականների միջինը տատանվել է 6-7.2 միջակայքում՝ «Լավ»:

6. ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ինչպես արդեն իսկ նշվել է՝ ուսուցիչների գնահատումն իրականացվել է 4 միավորային սանդղակով (4՝ «Գերազանց», 3՝ «Լավ», 2՝ «Բավարար», 1՝ «Անբավարար»)՝ ըստ ուսուցիչների ՏՀՏ իմացության և ուսուցման ընթացքում դրա կիրառման, դասերի արդյունավետության, տեսչական մարմնի կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքների, գնահատականների համադրման բնութագրիչների:

Հայոց լեզվի 60 ուսուցիչներից «Գերազանց» են գնահատվել 9-ը (15%), «Լավ»՝ 31-ը (52%), «Բավարար»՝ 18-ը (30%), «Անբավարար»՝ 2-ը (3%):

Մաթեմատիկայի 58 ուսուցիչներից «Գերազանց» են գնահատվել 3-ը (5%), «Լավ»՝ 15-ը (26%), «Բավարար»՝ 38-ը (66%), «Անբավարար»՝ 2-ը (3%) (գծապատկեր 36):

Գծապատկեր 36



Ինչպես ներկայացված է գծապատկեր 28-ում՝ երկու առարկաների դեպքում էլ «Անբավարար» են գնահատվել ուսուցիչների 3%-ը, դասավանդման արդյունավետությունը բարձր չէ մաթեմատիկայի ուսուցիչների մոտ:

Հայոց լեզվի ուսուցիչների միջին գնահատականներն, ըստ դպրոցների, ներկայացված են գծապատկեր 37-ում.

Գծապատկեր 37



Ըստ գծապատկեր 37-ի տվյալների՝ ուսուցիչների գնահատման արդյունքները ամենաբարձրն են Արմավիրի թիվ 8 միջնակարգ դպրոցում (գնահատման արդյունքում «Գերազանց» են գնահատվել 5 ուսուցիչներից 4-ը (80%)), ամենացածրը՝ Երևանի թիվ 46 ավագ դպրոցում (3 գնահատված ուսուցիչներից 1-ը գնահատվել է «Անբավարար», 2-ը՝ «Բավարար»):

Մաթեմատիկայի ուսուցիչների միջին գնահատականներն, ըստ դպրոցների, ներկայացված են գծապատկեր 38-ում.

Գծապատկեր 38



Ըստ գծապատկեր 30-ի տվյալների՝ ուսուցիչների գնահատման արդյունքները ամենաբարձրն են Գորիսի թիվ 1 ավագ դպրոցում (գնահատման արդյունքում «Գերազանց» են գնահատվել 5 ուսուցիչներից 3-ը (60%), «Լավ»՝ 2-ը (40%), «Բավարար»՝ 1-ը (20%)), ցածր՝ «Բավարար» արդյունք է գրանցվել 12 դպրոցներում:

Միջին գնահատականը «Գերազանց» գնահատված դպրոցները 3-ն են՝ հայոց լեզվից, միջին գնահատականը «Անբավարար» գնահատված դպրոցներ չկան թե՛ հայոց լեզվից, թե՛ մաթեմատիկայից:

7. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսուցիչների գնահատման միջին արդյունքները հայոց լեզվից 2.8 («Լավ»), իսկ մաթեմատիկայից՝ 2.3 («Բավարար») են, ստուգումների շրջանակում սովորողներին տրված գրավոր աշխատանքների գնահատման միջին արդյունքները հայոց լեզվից 5.9 («Բավարար») է, մաթեմատիկայից՝ 4.2 միավոր («Բավարար»):

Միաժամանակ նույն սովորողների նախորդ տարվա նույն առարկաների միջին տարեկան գնահատականները բարձր են. հայոց լեզվի դեպքում՝ 6.9 («Բավարար»), իսկ մաթեմատիկայի դեպքում՝ 6.6 միավոր («Բավարար»):

Դասալսումների և սովորողների գրավոր աշխատանքների որակական և քանակական արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ չնայած ընդհանուր առմամբ «Անբավարար» գնահատված դպրոցներ չկան, այնուամենայնիվ, դասավանդման և ուսումնառության գործընթացում առկա են որոշակի խնդիրներ:

Վերլուծության արդյունքները հիմք են տալիս եզրակացնելու, որ **սովորողների առաջադիմությունը ուղիղ համեմատական է դասավանդման գործընթացի որակի հետ**:

Ըստ դասալսման ձևաթղթի բաժինների՝ առկա է հետևյալ ընդհանուր պատկերը.

– ուսումնական միջավայրի գնահատման միջին արդյունքը հայոց լեզվի դասերին կազմել է 3.4 («Լավ»), իսկ մաթեմատիկայի դասերին՝ 3.3 («Լավ») միավոր, սակայն որակական վերլուծության արդյունքում պարզվել է, որ ուսումնական միջավայրը դպրոցներում բարելավման կարիք ունի՝ ուսումնաօժանդակ նյութերի բազմազանեցման, դրանք բոլոր սովորողների կարիքներին համապատասխանեցման, ՏՀՏ գործիքների կիրառման արդյունավետության բարձրացման, դասերի հստակ պլանավորման, ամբողջական փուլերով իրականացման և ժամանակի կառավարման ուղղություններով.

– «Ուսումնական նպաստավոր միջավայր» բաղադրիչը բարձր է գնահատվել հայոց լեզվի այն ուսուցիչների մոտ, որոնք համեմատաբար բարձր են գնահատվել ըստ *«Դասարանի և դասաժամի կառավարում» բնութագրիչի:* Հայոց լեզվի այն ուսուցիչները, որոնց դասերին բարձր է գնահատվել *հաղորդակցման մշակույթը*, համեմատաբար բարձր է գնահատվել նաև *դասարանի և դասաժամի կառավարումը.*

– մաթեմատիկայի դասաժամերին՝ ըստ «Ուսումնական նպաստավոր միջավայր» բաղադրիչի՝ համեմատաբար բարձր են գնահատվել այն ուսուցիչները, որոնք բարձր են գնահատվել ըստ «*Դասարանի կահավորանք*» բնութագրիչի: Միաժամանակ, համեմատաբար լավ *հաղորդակցվող* մաթեմատիկայի ուսուցիչների դասաժամերին լավ է նաև *դասարանի կահավորանքը.*

– դասավանդման գործընթացի գնահատման միջին արդյունքը հայոց լեզվի դասերին կազմել է 3.3 («Լավ»), իսկ մաթեմատիկայի դասերին՝ 3.2 («Լավ») միավոր, սակայն որակական վերլուծության արդյունքում պարզվել է, որ դասավանդումը դպրոցներում բարելավման անհրաժեշտություն ունի՝ դասավանդման և ուսումնառության նորարարական մեթոդների կիրառման, նյութի ընկալման և տնային առաջադրանքների ստուգման ու գնահատման տարբեր տեսակների և մեթոդների, խրախուսման ձևերի արդյունավետ կիրառման, հետադարձ կապի ապահովման ուղղություններով.

– դասավանդողի կողմից կարողունակությունների ձևավորմանը նպաստող գործընթացի գնահատման միջին արդյունքը թե՛ հայոց լեզվի, թե՛ մաթեմատիկայի դասերին կազմել է 3 («Բավարար») միավոր, սակայն որակական վերլուծության արդյունքում պարզվել է, որ դպրոցն

անհրաժեշտություն ունի վերանայելու և բարելավելու դասավանդման մեթոդաբանությունը քննադատական մտածողության և ինքնուրույնության ձևավորման համատեքստում.

– ըստ «Դասավանդում» բաղադրիչի՝ առավել բարձր են գնահատվել հայոց լեզվի այն ուսուցիչները, որոնք մեծ ուշադրություն են դարձնում նյութի ընկալման ստուգման և գնահատման վրա, մաթեմատիկայի այն ուսուցիչները, որոնք առավել ուշադրություն են դարձրել հետադարձ կապի ապահովման ուղղությամբ.

– հայոց լեզվի այն ուսուցիչները, որոնց դասերին բարձր է գնահատվել *նյութի ընկալման ստուգումն ու գնահատումը,* համեմատաբար բարձր է գնահատվել նաև *հետադարձ կապի ապահովումը:* Մաթեմատիկայի այն ուսուցիչները, *ովքեր համեմատաբար կարևորում են դասի խթանման գործընթացը՝ մեծ ուշադրություն են դարձնում նյութի ընկալման ստուգման և գնահատման գործընթացների վրա.*

– մաթեմատիկայի դասաժամերին «Կարողունակությունների ձևավորումը» համեմատաբար բարձր է գնահատվել այն ուսուցիչների մոտ, ովքեր բարձր են գնահատվել ըստ «Քննադատական և ստեղծագործական մտածողություն» բնութագրիչի: Բնութագրիչների գնահատման արդյունքներն էլ ցույց են տալիս, որ մաթեմատիկայի այն ուսուցիչները, ովքեր մեծ ուշադրություն են դարձնում սովորողների քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացման վրա՝ կարևորում են նրանց ինքնուրույնությունն ու համագործակցությունը.

– ուսուցիչների ՏՀՏ իմացության միջին գնահատականը հայոց լեզվի դասերին կազմել է 2.8, մաթեմատիկայի դասերին՝ 2.7 միավոր.

– հայոց լեզվի ուսուցիչների միջին գնահատականն, ըստ տեսչական մարմնի կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքների, կազմել է «Գերազանց»՝ 3 (15%), «Անբավարար»՝ 3 (15%) դպրոցներում.

– մաթեմատիկայի ուսուցիչների միջին գնահատականն, ըստ տեսչական մարմնի կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքների, «Գերազանց» չի գնահատվել ոչ մի դպրոցում, «Անբավարար» է գնահատվել 12 (60%) դպրոցներում.

– հայոց լեզվի թելադրությունից «Գերազանց» են գնահատվել գրավոր աշխատանքին մասնակցած սովորողների 15.7%-ը, «Անբավարար»՝ 22.8%-ը, մաթեմատիկայի գրավոր աշխատանքից՝ «Գերազանց»՝ 5.5%-ը, «Անբավարար»՝ 44.2%-ը.

– հայոց լեզվի ուսուցիչների միջին գնահատականն, ըստ գրավոր աշխատանքների և տարեկան գնահատականների համադրման արդյունքների, կազմել է «Գերազանց»՝ 3 (15%), «Անբավարար»՝ 1 (5%) դպրոցներում.

– մաթեմատիկայի ուսուցիչների միջին գնահատականն, ըստ գրավոր աշխատանքների և տարեկան գնահատականների համադրման արդյունքների, «Գերազանց» չի գնահատվել դպրոցներից ոչ մեկում, «Անբավարար» է գնահատվել՝ 9 (45%) դպրոցներում.

– հայոց լեզվի 60 ուսուցիչներից «Գերազանց» են գնահատվել 9-ը (15%), «Անբավարար»՝ 2-ը (3%): Մաթեմատիկայի 58 ուսուցիչներից «Գերազանց» են գնահատվել 3-ը (5%), «Անբավարար»՝ 2-ը (3%):

Դպրոցներում իրականացված գնահատման արդյունքների վերաբերյալ վերլուծությունները՝ սովորողների առաջադիմության և դասավանդման արդյունավետության բարձրացմանը միտված առաջարկներով, տրամադրվել են դպրոցների տնօրեններին:

Առաջարկները հիմնականում վերաբերել են ուսումնական նպաստավոր միջավայրի և դասավանդման գործընթացի բարելավմանը, սովորողների ինքնուրույնության, համագործակցության, քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացմանը նպաստող կարողունակությունների ձևավորմանը:

ՌԳՍՊՎԳ վարչություն